

- Շո՛ւն, սելեվէթ բեր:
- Յանուն հօր եւ որդւոյն...

Եւ գնդակահար կ'իյնայ Վարդան, որուն մէջ ցեղին ձայնը, ափնը, հաւատքը կ'արթննային այդպէս յանկարծ:

Ջարդարեան իր նորավէպերուն կամ լաւ եւս է ըսել իր պատմութեաներուն մէջ իր պարզութեամբը եւ բնականութեամբը կը յատկանշուի գերազանցապէս: Անտարակոյս, ինք ստահոգութիւնը չունի թատերական յուզումնալից տեսարաններու, հետաքրքրութիւն եւ ապշութիւն առթող դրուագներու: Գործին արուեստական մասին բոլորովին անփոյթ է. ձեւին, արտաքին յարդարանքին հոգածութիւնը չի տեսնուիր իր մէջ: Իր նիւթովը կը յափշտակուի, անոր ընդլայնումին կը մղուի իր նախասիրած եղանակովը: Գրական ոչ մէկ դպրոցի վրայ կը կաղապարէ ինքզինքը, որմէ կը հետեւցնեմ թէ վիպական ոչ մէկ ուղղութենէ ազդուած է որոշակի: Ասիկա իր տաղանդին ամուր յատկութիւններէն մէկն է: Ինքնագոհ եւ ինքնավստահ գրականութիւնն է ասիկա, որ իր ենթադրուած թերութիւններովն հանդերձ՝ ինքնատիպ է մանաւանդ: Ինքնատիպ է մանաւանդ, որովհետեւ անիկա կը պատկերացնէ գաւառի կեանքը իր նախնականութեանը մէջ. իր անտաշութեանը, իր խորդութեանը մէջ: Այդ մթին ու խորհրդաւոր կեանքը ներկայացնելու լուսագոյն ձեւը կարծես այն է զոր ընտրած է Ջարդարեան, անտաշ, անյարդար ու խորհրդալից: Քանի որ այդ կեանքը չունի քաղաքակրթական ձեքծեքում, այն արուեստական շպարը զոր մենք կը հաստատենք, ափսո՛ս, մեր կեանքին մէջ, մեր իբր թէ քաղքենի կենցաղին մէջ, պատճառ մը չիկար որ այդ կեանքը նկատող հեղինակը հակադրութիւն ցոյց չտար այդ ձեքծեքումին եւ այդ շպարին նկատմամբ: Եւ ամէն ձեւապաշտութենէ կոյս, Ջարդարեան կը մնայ, Թլկատինցիէն անմիջապէս ետքը, գաւառի լուսագոյն նորավիպագիրը, եւ իբր այն կը պատկանի, թերեւս առանց ուզելու, իրապաշտ դպրոցին: Իբր, սակայն, ինքնուրոյն եւ առանձնայատուկ իրապաշտութիւն մըն է. կեանքը կը նկարէ ինչպէս որ կը տեսնէ, իր